



Ազդարարության Trumpet's Sound փող

53-ՐԴ ՏԱՐԻ, ԱՄՍՏՐԱԼԻԱ
ԱՆՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2022



ԱՆ ՄԻՍԻՈՆԵՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՎ»
երկամսյա հոգեւոր թերթ

Պատասխանատու խմբագիր՝
հովիւ Հրաչ Գույումեան

ACM AUSTRALIA
PO BOX 1593,
CHATSWOOD NSW 2057
EMAIL: hkiujian@acmaust.org
URL: www.acmaust.org



Բովանդակություն

Ոչ մեկ աչք չէ տեսեր.	3
<i>Հովիւ՝ Հրաչ Գույումեան</i>	
Ինծի բերեք զանիկա	4
<i>Քաղում</i>	
Հայաստան. բաց նամակ.	5
<i>Քեփին Հօնր</i>	
Բաղամ	7
<i>Վեր. Հասկալ Ալաճաճի</i>	
Մովսեսի անյաջողությունները	10
<i>Տոն Սրբմբր</i>	
Մերժուած մեծ հիւրը	13
<i>Քաղում</i>	
Առաքելութիւն դէպի Հայաստան #24	14
<i>ԱՄՄ</i>	
Արցունքներս Լիբանանի համար	15
<i>ԱՄՄ</i>	

Կազմի նկարները՝ ԱՄՄ միսիոնարական
ծառայութիւն, Օգոստոս 2022թ.:

Փա՛նք տուէք Աստուծոյ՝

- Փա՛նք տուէք Տիրոջը Իր առատ օրհնութիւններուն համար:
- Շնորհակալութիւն յայտնէք Տիրոջը միսիոնարական ծանապարհորդութեան ընթացքին մեզ պաշտպանելու եւ առաջնորդելու համար:

Աղօթքի նիւթեր՝

- Աղօթեցէ՛ք Հայաստանի եւ Լիբանանի մէջ մեր խնամակալութեան տակ գտնուող ընտանիքներուն համար:
- Աղօթեցէ՛ք Լիբանանի մէջ բազմաթիւ տառապեալներու համար:
- Աղօթեցէ՛ք Հայաստանի եւ հարեւան երկիրներու միջեւ խաղաղութեան համար:
- Աղօթեցէ՛ք Հայաստան ժամանած մոր բեռնարկի թղթաբանական աշխատանքներուն համար:
- Աղօթեցէ՛ք Լիբանան ժամանած բեռնարկի մաքսազերծման աշխատանքներուն համար:

Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբուխ նուէրներով:

Ոչ մէկ աչք չէ տեսեր

«Հապա ինչպէս գրուած է. «Այն բաները որոնք աչք չէ տեսեր եւ ականջ չէ լսեր ու որոնք մարդու սրտին մէջ չեն ինկեր, Աստուած զինք սիրողներուն պատրաստեց»» (Ա Կորնթ. 2:9)

Թ՛՛յլ տուէք հարցով մը սկսիմ: Արդեօ՞ք կը սիրէք Աստուծոյ: Եթէ այո, ապա այս պատգամը ձեզ համար է: Ձեզի համար յատուկ պատրաստուած տեղ մը կայ, որը ոչ մէկ աչք չէ տեսեր, ոչ մէկ ականջ չէ լսեր, ոչ մէկ մարդու սրտով չէ անցեր:

Որոշ ժամանակ առաջ ընկերներէս մին փոքրիկ ցօղուն մը նուիրեց զիս և խնդրեց որ թաղարի մը մէջ դնեմ: Այն անսովոր բոյս էր, որը կը ծաղկէր տարին մէկ անգամ, միայն գիշերը: Ես գիշեր-ցերեկ հետեւեցի այս բոյսին: Մէկ տարուայ մէջ այն մեծ տերեւներ արձակեց: Երբ տեսայ բողբօջը՝ հասկցայ, որ շուտով ծաղկելու էր:

Ծաղիկի գլուխը սկսաւ աւելի ու աւելի մեծնալ: Ես բոյսը սեմնակ բերի, քանի որ կը տեսնէի, թէ այն շուտով պիտի ծաղկէր: Այո, այդ գիշեր, մօտաւորապէս ժամը 21:00-ին բողբօջը բացուեցաւ եւ շատ անսովոր ու գեղեցիկ սպիտակ ծաղիկ մը առաջ եկաւ, այնպիսին ինչպիսին երբեք չէի տեսած: Այն ամիս չափ մեծ էր: Ես արթուն մնացի մինչեւ կէսգիշեր՝ հիանալով անոր գեղեցկութեամբ: Ժամը 3:00-ին նորէն մօտեցայ նայելու, եւ ծաղիկը դեռ ծաղկած էր, բայց ժամը 6:00-ին այն ամբողջովին թառամած էր: Այն գլուխը կախած էր:

Աստուծոյ վրայ կը զարմանամ, որ նման գեղեցիկ բոյս մը ստեղծած է, որը կը ծաղկի տարին միայն մէկ անգամ եւ այն ալ գիշերը: Բայց հիմա, երբ կը կարդամ որ Աստուած Իրեն սիրողներուն համար այնպիսի բաներ պատրաստած է, որոնք աչք չէ տեսեր եւ ականջ չէ լսեր ու որոնք մարդու սրտին մէջ չեն ինկեր, ես պարզապէս կը հիանամ ու կը պատկերացնեմ, թէ Տէրը որքա՜ն գեղեցիկ բաներ պատրաստեց Իրեն սիրողներուն համար:

Այո՛, օր մը դժուարութիւնն ու ցաւը պիտի վերանայ: Երբ Իր փառքի մէջ տեսնեմ զինք, ես ամբողջ գիշերը արթուն պիտի մնամ՝ հիանալով իմ թանկագին Տէր Յիսուսի գեղեցկութեամբ:

Եթէ Ան կրնայ այդպիսի գեղեցկութիւն մը դնել ծաղիկի մը մէջ, որը միայն ութ ժամով կը ծաղկի, ապա կրնա՞ք պատկերացնել, թէ որքան գեղեցկութիւն դրած է Ան ամբողջ յաւիտենականութեան մէջ: Ո՛վ թանկագին Տէր, որքա՛ն շատ սիրուած ու օրհնուած ենք Քեզմով:

Հ. Գ.

Ինծի բերէք զանիկա

Աստուծոյ մէկ զաւակը անգամ մը մեծապէս նեղուած էր իր անապաշխար եղբօրը համար: Կիրակի առտուն հոգեւոր ժողովի գրնաց: Իր նիւթը սաստկապէս ծանրացեր էր սրտին վրայ: Օտար քարոզիչ մը եկած էր այն օրը եւ այն բեմէն Մարկոս 9-րդ գլուխը կարդաց: Խօսքը այնքան լրջօրէն ու զգացումով կը կարդացուէր, որ Աստուծոյ զաւակը իր վիշտը բոլորովին մոռցաւ: Երբ 18-րդ համարին հասաւ, քարոզիչը շեշտելով կարդաց սա բառերը. «Ինծի բերէք զանիկա»:

Այս երեք բառերը մեծ զօրութիւնով մտան անոր սրտին մինչեւ խորերը: Անիկա ժողովին մնացած մասը չկրցաւ լսել: Աստուծմէ պատգամ մը եկած էր իրեն: Սուրբ Հոգին այս խօսքերով կը խօսէր իրեն. «Ինծի բերէք զանիկա»: Ճիշդ հոն Իր բոլոր հոգերը սովորականէն բոլորովին տարբեր կերպով մը, Տիրոջ վրայ դրաւ: Հաւատքով եւ աղօթքով, իր եղբայրը շարունակ տարաւ ողորմած Փրկչին, որ պատրաստ ու կարող է օգնելու, ինչպէս որ կ'ընէր երբ կը պտըտէր երկրի վրայ 19 դարեր առաջ: Բեռը ինկաւ անոր վրայէն ու ան վստահեցաւ որ Յիսուս, կերպով մը, Իր ուզած ժամանակին պիտի պատասխանէ: Աղօթքի տեղէն գնաց ան, ոչ թէ տխուր երեսով մը, այլ անուշ, հանդարտ վստահութիւնով մը: Անիկա Յիսուսի ձայնը լսած էր, Անոր գացած էր: Իր եղբայրը Անոր տարած էր:

Երբ հասաւ Աստուծոյ ժամանակը, անիկա իր աղօթքին պատասխանը առաւ: Իր սիրելի եղբայրը եկած էր ու կը դաւանէր Քրիստոս իբրեւ իր անձնական Փրկիչը:

Ո՛վ ընթերցող, ունի՞ս ցաւ մը, ունի՞ս վիշտ մը, փափաք մը, հոգ մը՝ Յիսուսին բեր: Հաւատքով, աղօթքով Անոր բեր: Աղօթքիդ պատասխանը առնելով ուրախացիր, եւ թող Տէրը փառաւորուի:

Հայաստան. բաց նամակ

Հայաստան, ինչպիսի՜ խորհրդաւոր վայր: Արդարութեան համար նշենք, որ Երեւանի կեդրոնի որոշ հատուածներ չափազանց ճոխ են, եւ կարծես թէ ոչ ոք չի գիտեր, թէ ինչպէս: Բայց ես դեռ այնտեղ չեմ գտնուած: Ես երկու փոքր քաղաք այցելեցի՝ Վանաձորն ու Կիւմրին: Այնտեղ շռայլ ճոխութիւններ չկան, իսկ այն մարդիկ, որոնց այցելեցինք, այնքա՛ն աղքատ ու խեղճ են, որ հնարաւոր չէ բառերով նկարագրել:

Այս ճամփորդութեան ընթացքին անգամ մը եւս համոզուեցայ այն ինչին կը հաւատանք «Bright Hope World»-ի մէջ: Աղքատութիւնը պարզապէս տնտեսական հարց մը չէ, այն ունի խորունկ արմատներ, որոնց գլխաւոր գործօնը կոտորուած փոխյարաբերութիւններն են: Իմ հանդիպած իւրաքանչիւր ընտանիքի մէջ նկատած եմ ասիկա: Այս իմ գրածս մարմնաւորուած է Գոհարի պատմութեան մէջ, որուն երէկ այցելեցինք: Ան երեք զաւակներու միայնակ մայր է: Անոնցմէ երկուքը ծանր հիւանդ են ու բժշկական օգնութեան կարիք ունին: Ինքը՝ Գոհարը, վատառողջ է: Անոնք միասին կ'ապրին փոքրիկ սենեակի մը մէջ, որտեղ բոբբոսի հոտը այնքան զօրեղ էր, որը շատ կը ծանրացներ շնչելը: Դեռ տուն չմտած բոբբոսի հոտը արդեն նկատելի էր: 18 տարեկանին ծնողները ստիպեցին զինք ամուսնանալ դաժան եւ բիրտ տղամարդու մը հետ: 8 տարի դիմացաւ մինչեւ ստիպուած եղաւ դուրս գալ: Իրեն ծեծած էին, գլխուն վրայ կարի 23 հետք կար, իր 3 փոքրիկներով ստիպուած էր հեռանալ: Իսկ հիմա ան խոցելի վիճակի մէջ է, քանի որ կը պայքարէ իր եւ իր զաւակներու գոյատեւման համար: Խզուած յարաբերութիւններ, նախ՝ ծնողներուն եւ ապա՝ ամուսնու հետ: Արդեօ՞ք յոյս կայ Գոհարի համար:

Մենք այցելեցինք զինք տեսնելու, թէ ինչով կրնանք օգնել: Ան արտասուքներու մէջ դիմաւորեց մեզ, քանի որ զարմացած էր թէ խումբ մը մարդիկ կ'ուզեն իր տունը մտնել եւ սէր ցոյց տալ իրեն:

Ես այստեղ եկած եմ ինը հոգիէ բաղկացած խումբով: Երեւան վայրէջք կատարեցի ուրբաթ առաւօտեան եւ օդանաւակայանէն զիս անմիջապէս տարին մօտաւորապէս 60 հոգանոց խումբի մը հետ հան-

դիպելու համար, այնուհետեւ՝ խումբ մի երիտասարդներու, որոնք բանակումի գացած էին:

Յաջորդ առաւօտ ուղեւորուեցինք դէպի Վանաձոր, որտեղ հանդիպեցինք 25 ընտանիքներու, որոնց հետ առնչութիւն ունէինք: Շատ ուտելիք կար – սա կարծես այս ճամփորդութեան նշանաբանը ըլլար: Այնուհետեւ այցելեցինք մի քանի ընտանիք եւ ճամբայ ինկանք դէպի Կիւմրի, որտեղ 2 օր գիշերեցինք:

Աւարտեմ խօսքս՝ ձեզ ներկայացնելով խումբի միւս անդամներուն: Էտմոնը հայ տղամարդ է, ով ծնած է Սուրիոյ մէջ, բայց այժմ կ'ապրի Հոլանտայի մէջ: Ան եկեղեցիի հովիւ է եւ մի քանի անգամ այցելած է Հայաստան: Ան նաեւ կը ճանապարհորդէ այնպիսի վայրեր, ինչպիսիք են՝ Սուտանը, Եգիպտոսը, Մարոկկոն եւ ընկերներ ունի Եմենի մէջ: Անոր մայրը նոյնպէս մեզ հետ էր, ով ծագումով Սուրիայէն է, բայց 2012 թուականին դուրս եկաւ Սուրիայէն իր միւս որդիին հետ ապրելու Գերմանիայի մէջ: Ասիկա իր առաջին այցն է Հայաստան, եւ հետաքրքիր էր զինք հետեւելը: Ան հայերէն շատ լաւ չէր գիտեր:

Հրաչ եւ Քլարա Գույումեանները՝ Հայ քրիստոնէական առաքելութեան ղեկավարներն ու հիմնադիրներն են: Հրաչը ծնած է Եգիպտոսի մէջ, իսկ Քլարան՝ Պարսկաստանի մէջ, եւ կ'ապրին Աւստրալիոյ Սիտնի քաղաքին մէջ: Անոնք կը սիրեն իրենց ազգը եւ լաւագոյնը կը փափազին անոնց համար: Վերջին 26 տարիներուն կանոնաւոր կերպով այցելած են Հայաստան եւ Աւստրալիայէն բեռնարկղներու տեսքով բարեգործական օգնութիւններ տրամադրած են իրենց հովանաւորութեան տակ գտնուող կարիքաւոր ընտանիքներուն:

Այնուհետեւ ունինք Աւստրալիացի ընտանիք մը՝ Բրոնուիմն ու Ռոպերտը, եւ իրենց որդի՝ Սթիվենը: Անոնք կը սիրեն Հայաստանը եւ մի քանի անգամ այցելած են:

Նաեւ տօքթոր Դանիէլ Ճէյմսը, Աւստրալիացի բժիշկը, ծագումով Սինկապուրէն: Ան տարիներ շարունակ պարբերաբար այցելած է Հայաստան: Լաւ է խումբին մէջ բժիշկ ունենալը: Դեղորայքի կարիք ունեցողներու թիւը չափազանց շատ է, եւ մեր բժշկի ներկայութիւնը օգնեց շատերուն ճիշդ դեղորայք ընդունելու:

Քեվին Հօնըր

Բաղասամ

Թուոց 22-31

Հին Կտակարանի անձնատրութիւններէն Բաղասամ անունով մարգարէ մը կար որ նոյն ատեն հմայութիւն ալ կ'ընէր: Բաղասամ հակասութիւնով լեցուն մարդ մըն էր: Երբ Իսրայէլի ժողովուրդը Եգիպտոսէն ելաւ Քանանու երկիրը երթալու, եկաւ Մովաբի եւ Մադիանի երկիրը, ուրկէ պէտք էր անցնէր, Մովաբի թագաւորը՝ Բաղակը, ուզեց մէկը գտնել որ Իսրայէլի ժողովուրդը անիծէ, եւ Բաղասամի մարդ դրկեց այս պաշտօնին համար խոստանալով անոր վարձատրել: Բաղասամ երբ լուրը առաւ, մերժեց, բայց ետքը գնաց: Թագաւորը զինք լեռ տարաւ որ այդտեղէն տեսնէ Իսրայէլ ժողովուրդին բազմութիւնը դաշտին մէջ, սակայն Բաղասամ ըսաւ. «Թէպէտ եկայ, բայց ինչ որ Տէրը ըսէ ինծի ան պիտի ըսեմ»: Լեռան վրայ սեղաններ շինեցին ու խոյեր զոհ մատուցին Աստուծոյ, սակայն երեք անգամ հարցնելէ ետք Աստուած դարձեալ ըսաւ Բաղասամի որ օրհնէ Իսրայէլի ժողովուրդը: Բաղակ շատ բարկացաւ եւ Բաղասամը տուն դարձուց որովհետեւ զայն հոն բերած է որ անիծէ ժողովուրդին:

Այս մի քանի գլուխներուն մէջ հետեւեալը տպաւորիչ է Բաղասամի մասին. Բաղակի պատգամաւորները եկան Բաղասամի եւ խնդրեցին որ երթայ թագաւորին, Իսրայէլի ժողովուրդը անիծելու: Բաղասամ Աստուծոյ մարդ էր, գիտէր ինչ պատասխան պիտի տար անոնց, սակայն մարդոց ըսաւ որ հոն կենան այդ գիշեր եւ յաջորդ առաւօտ իրենց պիտի պատասխանէր Աստուծոյ հարցնելէն ետք: Այդ գիշեր Աստուած Բաղասամի կը հարցնէ թէ այդ հեթանոս մարդիկը ի՞նչ գործ ունին իր տան մէջ: Բաղասամ կը ջանայ արդարացնել ինքզինքը սակայն Աստուած կը ըսէ. «Անոնց հետ չես երթար»: Արդեօք այսօր մենք ալ նոյնը չե՞նք ընէր: Երբ բան մը գիտենք որ սխալ է, բայց քանի որ մեր խորհուրդներուն, մեր միջավայրին, մեր պարագաներուն կը յարմարի, կ'ուզենք այդ արդարացնել, եւ կ'աղօթենք Աստուծոյ որ պատասխանէ եւ պատասխանը գիտնալով հանդերձ կը ջանանք Աստուծոյ միտքը փոխել կարծես: Այս կը նմանի մեր փոքրիկ զաւակներուն, որոնք հակառակ իրենց ծնողքի ոչ ըսելուն, կը պնդեն իրենց խօսքը մինչեւ ձանձ-

րացնեն զանոնք եւ այո ըսել տան: Մենք ալ կը խորհինք որ Աստուած նոյնն է: Բաղասամ իսկ ըսաւ. «Միթէ Աստուած մա՞րդ է որ ըսածին վրայ զղջայ»: Աստուած քանիցս ըսաւ Բաղասամի որ օրինէ Իսրայէլի ժողովուրդը:

Այսօր Աստուած մեզի գալով չըսեր. «Հետդ եղող մարդը ո՞վ է: Գրպանի շահած դրամդ ո՞ր է: Այդ բռնած դիրքդ ի՞նչ է: Դիմացիսն ցուցաբերած ոչ քրիստոնէական հոգիդ ի՞նչ է: Դուն կը խորհիս թէ հաւատացեա՞լ ես, մարգարէ՞ ես, բայց այս վարմունքը եւ այս վարուելակերպը ի՞նչ է»: Մենք երբեմն կը ջանանք արդարացնել մեր ըրածը բայց Աստուած Իր միտքը պիտի չփոխէ»: Դուն ուզածիդ չափ քու արարքդ արդարացուր, քու ըրած սխալդ շիտակ ըսէ, բայց եթէ Աստուծոյ Խօսքին լոյսին տակ անիկա սխալ է, դուն եւ ես չենք կրնար համոզել զԻնք: Աստուծոյ միտքը չենք կրնար փոխել:

Բաղակի պատգամաւորները դարձեալ կուգան, Բաղասամ նորէն այդ մարդիկը իր տունը կը պահէ, որպէսզի Աստուծոյ հարցնէ թէ կրնայ երթալ կամ ոչ: Աստուած Իր ըսելիքը մէկ անգամ կ'ըսէ: Եթէ կը հասկընաս, պատիժին սպասէ: Այս անգամ Աստուած կըսէ. «Քանի երթալ կ'ուզես, գնա՛»: Սեա այն մարդը որ ըսած էր «Ոսկի ալ տան չեմ երթար», ելաւ եւ գնաց:

Ինչպէս յիշեցի թէ պզտիկները մեր համբերութիւնը կը փորձեն կրկին անգամներ, սատանան ալ նոյնը կ'ընէ եւ կը համոզէ որ այն ինչ որ մեղք է, սխալ է, ալ սովորական դարձած բան մըն է, չվնասէր: Նոյնը եղաւ Բաղասամի պարագան: Պատրաստուեցաւ մարդոց հետ երթալու առանց անդրադառնալու որ իր ըրածը սխալ է, սակայն ճամբուն վրայ իր սխալը տեսաւ: Ե՞րբ: Երբ որ Աստուծոյ հրեշտակը տեսաւ: Երեք անգամ իր էշը ճամբէն կը շեղի եւ Բաղասամ երեք անգամին ալ էշը կը ծեծէ: Էշը բան մը կը տեսնէր որ ինք չէր տեսներ: Իր աչքին առջեւ Բաղակի պալատը կար, անոր ոսկին կար: Երբ որ այս աշխարհի փառքին, հմայքին կը նայիս, վստահ եղիր զԱստուած պիտի չտեսնես, Աստուծոյ փառքին պիտի չարժանանաս: Երրորդ անգամ էշը խօսեցաւ ըսելով, ինչո՞ւ զիս կը ծեծես, յանցաւորը դուն ես, մեղաւորը դուն ես, ահա հրեշտակը սուրով կեցած է եւ պիտի սպաննէ քեզ եւ դուն այնչափ տարուած ես, որ Աստուծոյ հրեշտակը չես տեսներ, եւ էշը կը ծեծես: Որչափ դիւրին է մեր ըրած մեղքերուն համար ուրիշը յանցաւոր բռնել,

ուրիշը այսպանել փոխանակ զոջալու: Շփոթութեան մէջ Աստուծոյ ձեռքը չենք տեսներ: Էշը խօսելէն վերջ Բաղաամի աչքերը բացուեցան եւ գիտակցեցաւ իր յանցանքին: Մեր սխալները չենք տեսներ մինչեւ որ Աստուծոյ առջեւ չգանք: Սակայն Բաղաամ տակաւին շարունակեց իր ճամբան եւ Բաղակի հետ խնճոյքի մատաւ: Երեւակայեցէք որ Աստուծոյ ժողովուրդին թշնամիներուն հետ Աստուծոյ մարդը խնճոյքի նըստեր է: Միթէ մենք ալ նոյնը չե՞նք ընէր մեղաւորներու հետ Աստուծոյ գործին, Աստուծոյ զաւակներուն, Աստուծոյ տանը դէմ խօսելով:

31-րդ գլխուն 16-րդ համարին մէջ Աստուած Բաղաամը մեռցնել կուտայ իր Աստուծոյ թշնամիներուն տուած խորհուրդին (վարդապետութեանը) համար. Բաղաամ ըսաւ Բաղակի. «Այս ժողովուրդը չեմ կրնար անիծել որ Աստուած զիրենք զարնէ, բայց մէկ կերպ կայ որ Աստուած զիրենք զարնէ, այն ալ եթէ այս ժողովուրդին մեղք կրնաք գործել տալ, Աստուած զիրենք կը զարնէ: Գացէք իրենց հետ ապրեցէք, իրարու հետ խնամութիւն ըրէք, Աստուծոյ ժողովուրդը հեթանոս ժողովուրդին հետ խառնուի եւ այդ պատճառաւ անոնք պիտի սկսին ձեր չաստուածները պաշտել, եւ այն ատեն Աստուած պիտի բարկանայ եւ զիրենք անիծէ»: Իսկապէս ալ Իսրայէլի ժողովուրդը իր Աստուածը ձգեց, գնաց Մովաբացուց չաստուածները պաշտեց, եւ Աստուած անոր համար իրենց մէջէն 24,000 մարդ սպաննեց եւ այդ գաղափարը Բաղաամի գաղափարն ըլլալով անոր ալ պատժեց:

Այսօր պատկերը նոյնն է, եկեղեցին եւ աշխարհը, հաւատացեալները եւ մեղաւորները: Աստուծոյ Խօսքը կ'ըսէ մենք անոնց հետ գործ չունինք: Անոնց հետ պիտի չխառնուինք, անոնց ընտրած ճամբաները պիտի չընտրենք: Բաղաամը այսօր քեզի եւ ինծի կը խօսի՞: Այո, ինծի կը խօսի թէ Աստուած նոյնն է, Իր միտքը չի փոխեր, ես Իրեն պետք է ենթարկուիմ, ոչ թէ Ինք ինծի, այն ատեն է որ ես կրնամ Տիրոջը հաճելի գաւակ ըլլալ, թէ ոչ եթէ երկուքին միջեւ պիտի տատամսիմ, աջ ու ձախ երթամ, իմ վախճանս Բաղաամի պէս կ'ըլլայ: Բաղաամ ըսաւ. «Երանի թէ վախճանս արդարներու վախճանին պէս ըլլայ եւ ես արդարներու մահովը մեռնիմ»: Ինչո՞ւ իր մահը արդարներուն վախճանին պէս չեղաւ, քանի որ արդարներու պէս կեանք չ'ապրեցաւ: Եթէ արդարի պէս կ'իզեւս մեռնիլ, արդարի պէս ալ կեանք պետք է ապրիս: Թող Տէրը Բաղաամի միջոցաւ քեզի եւ ինծի խօսի, որ մենք այսօր մեր կեանքներուն զգոյշ ըլլանք: Ամէն:

Մովսէսի անյաջողութիւնները

Ելից 4:26–5:23

Մովսէսը պատրաստուեցաւ Եգիպտոս վերադառնալու. ան վերջապէս կ'ուզէր Աստուծոյ կամքը կատարել: Այնուամենայնիւ, հետաքրքրական է իմանալ, թէ ինչ մտքեր ունեցաւ ան: Ի՞նչ կը սպասէր, որքանո՞վ հասկցած էր Աստուծոյ այն արտայայտութիւնը, որ փարատունը թոյլ պիտի չտար ժողովուրդին Եգիպտոսէն դուրս գալ:

Երբ ամէն ինչ սխալ կ'ընթանայ

Սկիզբը կը թուար թէ ամէն ինչ լաւ կ'ընթանար: Ահարոնը հանդիպեցաւ Մովսէսին, ինչպէս Աստուած պատուիրած էր: Անոնք միասին հանդիպեցան իսրայէլացիներու երեցներուն, ովքեր ողջունեցին այն լուրը, որ Աստուած պիտի օգնէր Իր ժողովուրդին: Յետոյ անյաջողութիւններ եղան: Ինչպէ՞ս կ'արձագանգենք, երբ ամէն ինչ ըստ ծրագրի չի ընթանար:

Մտածեցէ՛ք պատահածի մասին: Թէեւ Իսրայէլի երեցները ուրախ էին Մովսէսի խօսքերէն, փարաւունը, անշուշտ, այդպէս չէր: Երբ Մովսէսն ու Ահարոնը գացին անոր մօտ՝ Տիրոջը հրամանով, որ ան ազատ արձակէ իսրայէլացիներուն, վերջինս հարցուց, թէ ո՞վ է Եհովան: Ան ոչ միայն հարցուց, թէ ո՞վ է Աստուած, այլեւ ըսաւ, թէ թոյլ պիտի չտար Իսրայէլին երկրէն դուրս գալ:

Փոխարէնը՝ փարաւունը դժուարացուց ստրուկներու կեանքը: Առաջ անոնց կը տրամադրուէր աղիւս պատրաստելու համար անհրաժեշտ ծոցտը, այժմ անոնք պէտք է գտնէին աղիւսը եւ նոյն չափաբաժինն արտադրէին: Երբ իսրայէլացիները ծեծի ենթարկուեցան օրական չափաբաժինը չներկայացնելու համար, անոնք շուտով պարզեցին, որ փարաւունին բողոքելը ոչ մէկ արդիւնքի պիտի չյանգեցնէր: Ան կը մեղադրէր իրենց ծուլութեան մէջ եւ մտադրութիւն չունէր անոնց կեանքը թեթեւցնելու:

Իսրայէլացիներու երեցները գաղափար չունէին Աստուծոյ եւ չար ուժերու միջեւ պայքարի մասին. անոնք պարզապէս կը տեսնէին, որ իրենց ստրկութիւնն աւելի դաժան էր, քան առաջ: Անոնք Մովսէսին ու

Ահարոնին մեղադրեցին իրենց անախորժություններուն համար:

Մովսէսի արձագանքը

Մովսէսը չէր գիտեր, թէ ինչպէս վարուէր իր առջեւ ծառացած խնդրի հետ: Փաստօրէն, ան Տիրոջ ըսաւ, որ ըրած է այն, ինչ իրեն ըսուած էր ընել, եւ ամէն ինչ աւելի վատ դարձաւ, քան առաջ էր:

Ան հարց տուաւ. ինչո՞ւ մեզ նեղութեան մէջ նետեցիր: Ինչո՞ւ ինծի կ'ուղարկես: Այդպէս ըրիր, որպէսզի ձախողուի՞մ: Մովսէսը չտեսաւ (յաճախ մենք նոյնպէս) Աստուծոյ եւ Իր զօրքերու ու չար ուժերու միջեւ շարունակական պայքարը: Սա պատահեց Յովսէփի հետ: Փարսւոնի ծառայի երազը բացատրելէն ետք ան ըսաւ.

«Բայց քեզի բարիք եղած ատեն զիս միտքդ բեր, կ'աղաչեմ քեզի, ինծի բարութիւն ըրէ եւ զիս փարաւոնին առջեւ յիշելով՝ զիս այս տունէն դուրս հանէ: Քանզի իրացընէ գողցուեցայ Երբայեցիներու երկրէն եւ հոս ալ բան մը չըրի որ զիս այս գութը նետեն» (Ծննդ. 40:14-15):

Բայց Յովսէփը չստացաւ այն օգնութիւնը, որուն կը սպասէր: Այնուհետեւ, երբ փարաւոնը տեսաւ իր երազները, Յովսէփին բանտէն կանչեցին՝ թագաւորի անմիջական խորհրդատուն ըլլալու համար:

«Երբ սով բերաւ երկրի վրայ, հացին բոլոր զօրութիւնը կտրեց: Անոնց առջեւէն մարդ որկեց, Յովսէփը՝ որ ծառայութեան ծախուեցաւ: Անոր ոտքերը կապանքով նեղեցին, անոր անձը երկաթի մէջ դրուեցաւ՝ մինչեւ այն ժամանակ, երբ անոր խօսքը եկաւ, Տիրոջը խօսքը փորձեց զանիկա: Թագաւորը որկեց ու արձակեց զանիկա: Ժողովուրդներուն իշխանը ազատեց զանիկա: Իր տանը վրայ տէր կեցուց զանիկա եւ իր բոլոր ունեցածին վրայ՝ իշխան, որպէս զի անոր իշխանները իր ուզածին պէս կապէ ու անոր ծերերը իմաստուն ընէ» (Սաղ. 105:16-22):

Միայն տարիներ անց, երբ Յովսէփը միացաւ իր եղբայրներուն, կըրցաւ ըսել, որ այն չարիքը, որը անոնք նախատեսած էին, Աստուծոյ կողմէ ծրագրուած էր բարիի համար: Միայն փորձութիւններէն յետոյ Յովսէփը կըրցաւ տեսնել Աստուծոյ գերիշխող ձեռքը:

Դաւիթը եւս մէկ օրինակ է, ով ընտրուած էր Աստուծոյ կողմէ եւ յետոյ ստիպուած էր սպասել, մինչեւ Սաւուղի մահաւանալը: Որքա՞ն յաճախ Դաւիթը կը մտածէր, թէ ինչու ինքը անապատին մէջ կը թաքնուէր:

Այնուամենայնիւ, ճիշտ այնտեղ ան շատ մօտիկէն ճանչցաւ իր Աստուծոյն: Այնտեղ ան նաեւ սորվեցաւ դեկավարել տարբեր բնատրուրեան տէր մարդկանց:

Մինչ կ'անցնինք դժուար ժամանակներով, յաճախ չենք տեսներ այն ընդհանուր ծրագիրը, որն Աստուած ունի մեզի համար: Մենք չենք գիտեր այն ուղին, որը Ան ծրագրած է, որը մեզ աւելի կը մօտեցնէ դէպի Իրեն:

Երբեմն Ան կրնայ բացայայտել, թէ ինչու որոշ բաներ կը պատահին. Ան այդպէս ըրաւ Պօղոսին՝ մարմնի փուշ ուղարկելու ժամանակ: Բայց հնարաւոր է՝ մինչեւ ամէն ինչ աւարտելը մենք չգիտակցինք, թէ Աստուած ինչ ծրագրած է:

Ինչպէ՞ս կ'արձագանքեինք

Յովսէփը ճիշդ դիրքորոշում բռնեց: Մեզ համար հարցն այն է, թէ արդեօք համբերութեամբ կը սպասէի՞նք, որ Աստուած ընէ այն, ինչ Ինք կ'ուզէ ընել: Յաւօք, յաճախ անհամբեր ենք՝ ակնկալելով, որ Աստուած անմիջապէս փոխէ իրադարձութիւնները:

Մովսէսը կը բողոքէ

Մովսէսը չէր հասկցած, որ Աստուած գիտէր ապագայի դէպքերը, երբ ըսաւ, թէ վստահ է, որ փարաւոնը չ'արձակէր ստրուկներուն: Այնուամենայնիւ, փարաւոնը վերջնական իշխանութիւնը չէր, թէ՛ ինքը, թէ՛ Մովսէսը իմանալու էին, որ Աստուած կը վերահսկէ եւ պիտի ստիպէ փարաւոնին հնազանդիլ Իր հրամաններուն:

Մովսէսն իր ժողովուրդի երեցներուն կողմէն նախատուել յետոյ վերադարձաւ Տիրոջ մօտ՝ իր բողոքները ներկայացնելու համար: Ան կը մտածէր իսրայէլացիներու առջեւ ծառացած լրացուցիչ խնդիրներու մասին եւ ուստի հարցուց, թէ ինչո՞ւ Աստուած իրեն ուղարկեց փարաւոնին: Փարաւոնը ոչ միայն մերժած էր իսրայէլացիներուն արձակել, այլեւ աւելցուցած էր անոնց տառապանքները, իսկ Աստուծոյ կողմէ Իր ժողովուրդին ազատելու ոչ մէկ նշան չկար: Կը թուայ թէ՝ Մովսէսը կ'ուզէր իր յանձնարարութենէն խուսափիլ:

Աստուած կը վերահսկէ

Այնուամենայնիւ, Աստուած մտադրութիւն չունէր Մովսէսին փարա-

տնի հետ խօսելու իր պարտականութենէն արձակելու, ոչ ալ թոյլ պիտի տար, որ փարաւոնը շարունակէր չհնազանդել Իրեն: Փարաւոնը կրնար փորձել ուժով պահել իսրայէլացիներուն, բայց ի վերջոյ ան նոյնքան ուժգին հրամայեց իրենց հեռանալ իր երկրէն:

Նախ՝ Աստուած Մովսէսին յիշեցուց, թէ ով է Ինքը: Ան ըսաւ «Ես եմ Յահվեն» (սովորաբար կը թարգմանուի որպէս ՏէՐ՝ ուխտ պահող Աստուած): Ան էր, ով յայտնուեցաւ Աբրահամին, Իսահակին եւ Յակոբին, որպէս ամենակարող Աստուած՝ Էլոհիմ Շաղղայ՝ ամենակարող Աստուած: Սակայն Եհովայ, Տէր անունով Ան չյայտնուեցաւ անոնց:

Աստուած արդէն Մովսէսին յայտնուած էր որպէս Յահվէ՝ Տէր: Աստուած ընդգծած էր Իր անուան մէկ կողմը. Ան յաւերժ գոյութիւն ունեցողն է՝ ԵՄ ԵՄ-ը: Ան է, ով կայ եւ եղած է եւ միշտ պիտի ըլլայ: Այժմ Տէրը աւելցուց Մովսէսին ուղղուած Իր յայտնութիւնը՝ յիշեցնելով իրեն, որ Ինքը ուխտ պահող Աստուած է: Ան Իր ուխտը հաստատած էր Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի հետ՝ խոստանալով անոնց Քանանի երկիրը տալ, որտեղ իրենք կ'ապրէին որպէս պանդուխտ:

Տոն Սթոքմըր

Մերժուած մեծ հիւրը

Վիենացի յայտնի բժիշկ Ատուլֆ Լորենց՝ անցեալ դարուն կիսուն ապրող աշխարհահռչակ վիրաբոյժ մըն էր: Ամէն կողմէ մարդիկ իրեն կը դիմէին եւ իր միջամտութիւնը կը խնդրէին՝ թանկագին կեանքեր ազատելու համար: Անկարող ըլլալով գոհացում տալ բոլորին, ուրիշ մասնագէտներ պատրաստեց: Իր օգնականներուն սորվեցուց վիրաբուժական արուեստին բոլոր գաղտնիքները, եւ այս կերպով գործը քիչ մը թեթեւցաւ: Ուստի կարողացաւ Միացեալ Նահանգներ երթալ, ուր հրաւիրուած էր դասախօսելու կուրաղիքին եւ աղեթափութեան գործողութիւններու մասին:

Օր մը՝ ծանր աշխատանքէ մը ետք՝ դուրս ելաւ գիշեր ատեն, մաքուր օդ շնչելու եւ պտոյտ մը ընելու համար: Յանկարծ սեւ ամպեր կուտակ-

ուեցան երկինքը, եւ տեղատարափ սկսաւ: Բժիշկը բախեց գեղեցիկ տեսքով տան մը դուռը՝ որպէսզի անձրեւէն պաշտպանուի: Սակայն ջղայնացած կին մը դուռը բացաւ եւ հապճեպով ըսաւ. «Մենք այսօր մեծ նեղութեան մէջ ենք: Գացէք եւ դրացիի մը յարկին տակ ապաստան փնտռեցէք»: Եւ անմիջապէս գոցեց դուռը: Տօթոր Լորենց փողոցը ելաւ այդ աննպաստ օդին: Անձրեւն ու փոթորիկը մինչեւ իր ոսկորները կը թափանցէին: Վերջապէս մարդ մը զինք գտնելով՝ կառքի մը մէջ դրաւ եւ պանդոկ տարաւ:

Այդ նոյն գիշերը՝ վերոյիշեալ կինը օրաթերթ կը կարդար: Առաջին էջին վրայ աչքին զարկաւ նշանատր վիրաբոյժին նկարը: Անմիջապէս զայն ճանչցաւ եւ բացագանչեց.

Աստուած իմ, ինչ ըրի: Մերժեցի տանս դուռը բանալ այն միակ անձին՝ որ կրնար մեր աղջիկին կեանքը փրկել: Թերեւս եթէ հիմա ալ իրեն պատմենք մեր պարագան, ան գթայ մեզի եւ կատարէ մեր խնդրանքը:

Ուստի վազեց դէպի պանդոկ: Հոն իրեն ըսուեցաւ թէ նշանատր բժիշկը դասախօսութեան մէջ էր, եւ թէ կարելի չէր զինք խանգարել: Կինը անձկութեամբ սպասեց, բայց ի գուր: Ատուլֆ Լորենց ուրիշ դռնէ մը ելելով շոգեկառք առաւ, եւ հեռաւոր քաղաք մը գնաց:

Յիսուս Քրիստոս՝ աշխարհի Փրկիչը եւ հոգիներուն մեծ Բժիշկը՝ կը բախէ շատերուն սրտերուն դուռը, Ան կ'ուզէ բուժել անոնց հիւանդ հոգիները եւ մեղսալից սրտերը: Սակայն անոնք կը մերժեն ընդունիլ այն միակ Անձը, որ կարող է զիրենք ազատել մեղքի ու մոլութեան շղթաներէն: Առաքեալը կ'ըսէ. «Ուրիշ մէկով փրկութիւն չկայ. վասն զի անկէ զատ ուրիշ անուն մը չկայ երկնքի տակ՝ մարդոց մէջ տրուած, որով կարող ըլլանք փրկուիլ» (Գործք 4:12): «Հապա մենք ինչպէ՞ս պիտի ազատինք՝ եթէ անհոգ ըլլանք այնպիսի մեծ փրկութեան մը մասին, որ նախ Տէրոջմէն հռչակուեցաւ ու լսողներուն ձեռքով հաստատուեցաւ» (Եբր. 2:3):

Քաղուած «Զմայլելի դրուագներ» գրքէն



Առաքելութիւն դէպի Հայաստան #24

Փառք կուտանք Տիրոջը, որ այս տարի ինը հոգանոց միսիոնարական խումբ կազմեցինք: Եղբայրներ միացան Հոլանտիայէն, Նոր Զելանդիայէն, Հարաւային Աւստրալիայէն եւ Նոր Հարաւային Ուելսէն:

Մեր աշխատակիցներն ու Հայաստանի մէջ մեր խնամակալութեան տակ գտնուող բազմաթիւ ընտանիքներ անհամբերութեամբ կը սպասէին մեզ կրկին տեսնելու՝ համաճարակի հետեւանքով երեք տարուայ ընդմիջումէն ետք:

Մեր մէջ կային վեց քարոզիչներ, ովքեր այցելեցին բազմաթիւ եկեղեցիներ, կատարեցին բացօթեայ աւետարանչական ժողովներ եւ մանկական հաւաքոյթներ: Ամենակարեւոր իրադարձութիւններէն մէկը 22 ամձանց մկրտութիւնն էր, ովքեր Տիրոջը ընդունած էին համաճարակի ժամանակ:

Երեսանի մէջ Տիրոջը ընծայեցինք մեր նոր շէնքը՝ «ՓԱՐՈՍ»-ը: Ասիկա մեր կեդրոնական գրասենեակը պիտի ըլլայ, որտեղ պիտի կարողանանք վարել մեր մանկական ծառայութիւնները, սուրբգրոց սերտողութիւնները, հիւրընկալել մեր հիւրերը եւ պահեստաւորել որոշ ապրանքներ, որոնք Աւստրալիայէն ժամանակ առ ժամանակ կը ստանանք:

Այս անգամ նոյնպէս շատերն ընդունեցին Քրիստոսին, որպէս իրենց Փրկիչը: Մարտունն ու Աշոտը կը շարունակեն խնամակալել անոնց Քրիստոսի Խօսքով:

Կարողացանք այցելել մեր կարիքաւոր ընտանիքներէն շատերուն՝ քաջալերելով անոնց եւ աղօթելով անոնց համար: Կը խնդրենք յիշել ACM-ը ձեր աղօթքներուն մէջ: Յատկապէս աղօթեցէ՛ք, որ Հայաստանի եւ հարեւան երկիրներուն միջեւ խաղաղութիւն ըլլայ:

Եթէ Տէրը կ'առաջնորդէ ձեզ ընտանիք մը հովանաւորել, ապա կը խնդրեմ այցելել մեր կայքէջը՝ www.acmaust.org:

ԱՍՄ

Արցունքներս Լիբանանի համար

ACM-ը կը հովանաւորէ Լիբանանի որոշ կարիքաւոր ընտանիքներու, եւ այս ծառայութեան համար երկու գործընկերներ ունինք Լիբանանի մէջ, որոնք կ'աջակցեն մեզ:

Աստուած օրինած է Լիբանանը բնական գեղեցկութեամբ, բայց ցաւալի է տեսնել, թէ մարդիկ ինչ ըրած են այս գեղեցիկ երկրին:

Դրամատուները թալանած են ներդրուած ողջ գումարը: Այսօր ամենահարուստը նոյնքան աղքատ է, որքան կողքի հարեւանը: Ջուրը պէտք է ծախու առնել, լոյսը օրական մէկ ժամով է, ոչ մէկ պիզնես չի կրնար գործել, մարդիկ տունը նստած են մթութեան մէջ, ինդերները հասանելի է օրական ընդամենը մէկ ժամով... աշխատանք չկայ, գնած է, իսկ դեղորայք գտնելը շատ դժուար է:

Չորս օր ապրեցանք այս մարդկանց հետ, տեսանք անոնց սարսափելի կենցաղային պայմաններն ու շատ ընտանիքներու տառապանքները:

Այնքան մեծ քաղց կար Խօսքին նկատմամբ: Շնորհակալ եմ Աստուծոյ, որ կրցայ քարոզել կիրակի մը եւ նաեւ սնունդի տոպրակներ բաժնել 200 ընտանիքներու:

Եթէ Տէրը կ'առաջնորդէ ձեզ Լիբանանցի ընտանիք մը հովանաւորել, ապա կը խնդրեմ այցելել մեր կայքէջը՝ www.acmaust.org:

ԱՍՍՐ



ՀԱՅ ԲՐԻՍՏՈՆԵԱԿՆ